

ՏՐԱՊԵՍԻԱ

ՈՐԱԳԻՐ

Դաշնադրական Դաւաադրական և Զոհադրական

ԵՐԵՎԱՆԻ ՏԵՐԻՒՆ, 124

ՉԻՐԻՔԻՆԻ

ՈՒՐԻՆԹ 5 ՓԵՏՐՈՒՆ 1843

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կոստանդնուպոլիս, 26 Յունվար:

Պաշտատու կառավարիչ Կէճիպ փաշայէն թա-
թար մը գալով, Բարձրագոյն Գուռը իմացաւ թէ
նոյն միւշիւրը գունդ մը զօրք խրկել է Լամա Զիւ-
սէին ըսած քաղքին վրայ, որոնք բոլորովին նուա-
ճեր են ան տեղի ապստամբները: Եւ քաղաքը որ
Պաշտատէն 28 փարսախ ու Բէրպէլլայէն մէկ
փարսախ հեռու է, Պաշտատու փաշայութեանը
տակն է Բէրպէլլայի պէս: Բանի մը ժամանակէ
ի վեր հոս տեղա իբրեւ ապաստանարան եղած էր
հպատակութեան տակ չի մոնող Թաիառական առ-
պըներու: Բնակիչներն ալ անոնց հետ մէկ ըլլալով՝
չէին ուզեր տուրք վճարել: Ուստի հարկաւոր էր
աս զօրքերուն անոնց վրայ երթալը, որ և կա-
տարեալ յաջողութեամբ գլուխ ելաւ: Բանի մը
անձինք աղէկ չիմանալով ասոր բուն պատճառը
անանկ ձան հանեցին թէ Լամա Զիւսէինի վրան
երթանք՝ պարսից դէմ էր, որովհետեւ աս քաղա-
քին մէջ է Զիւսէինի գերեզմանը ու Բէրպէլլայի
մէջ Լիւինը, որոնց մեծ յարգ ու պատիւ կուտան
պարսիկները ու հոն ուխտ կերթան, ինչպէս օսման-
ցիք Մէքքէ ու Մէտինէ, ու քրիստոնէայէ Լորու-
սաղէմ: Ան կըրտանին նաև Պարսկաստանու ամեն
կողմէն, հարուստ պարսիկներու մարմինը, որոնք
Ջերմուանդութեամբ կուղեն հոն թաղելու: ասիկա

հարստութեան մեծ աղբիւր մըն է Պաշտատու փա-
շայութեանը համար: Լամա Զիւսէինի ու Բէր-
պէլլայի մէջ ուրիշ շատ անբաւ հարստութիւններ
կան, արծաթ, շալ, պատուական կերպաններ, ևն.
որ պարսիկները գերեզմաններուն վրայ դրած են ի
պատիւ մեռնողներուն: Բայց Կէճիպ փաշայի զօրք
խրկելուն նպատակը Բ. Գրանը տուրքերը վճարել
տալ էր ու վերնտիւ անկէց առաւելները որ ընա-
կիչներուն անգամ շատ վնաս կուտային: Եւ Սե-
Կէճիպ փաշան թող չի տըլաւ որ պատուաւոր գե-
րեզմաններուն դպչին և ոչ հոն եղած հարստու-
թիւններուն: Ուստի ամենեւին թշնամութիւն մը ը-
րած չի սեպելը պարսից դէմ: Բնագահաւոր Կէ-
ճիպ փաշայի ընթացքը աղէկ կըրցուցնէ Բ. Գր-
ան ունեցած փափագը՝ բարեկամական կապակցու-
թիւններ հաստատելու պարսից տէրութեանը հետ:
— Եւ Սեմուէլին Գալաթի Կէճիպին, որ վեր-
ջին ժողովքին մէջ Պէլլինի դեսպան անանեցաւ,
այսօր կըմեկնէ իր պաշտօնին երթալու:

— Երկրպագան շոքեմալը Պուլաք, ամսուս 22 ին
Երէքսանդրիայէն շանագ դալէսի հասեր է, ուր
տեղ քարանդիսա պիտի ընէ: Եւ շոքեմալին մէջն է
ԲՏմէտ Գէվզի փաշային ընտանիքը, և ուրիշ շատ
անձինք: Կըսուի թէ Բ. Բարձրութիւն Լազիպտոսի
փաշան, նախկին ծովապետին գանձը՝ օսմանեան
կառավարութեան կըխրկէ յատուկ սեղանաւորի մը
հետ որ աս նաւուն մէջն է եղեր:

Երկրումէն կըգրին 11 յունվարի:

«Իմացանք որ Կուրի Կէճիպին Պաշտատէն պի-
տի մեկնէ: ուրեմն կամ վաղը կամ միւս օր հոս պի-
տի ըլլայ: Եւ մէն մարդ անհամբերութեամբ կըսպա-
սէ պաշտօնատարն ընդ գալը, պարսից հետ եղած
գործքը կանոնաւորելու համար: Եւնոնց համար յա-
տուկ տեղեր պատրաստուելոյն, որ եղանակին
հասակաւ ինչը անոնց չի դաչի, վասն զի մեր եր-
կիրը գրեթէ ձուկին տակը թաղած է:

«Վերջին լուրերէն լսեցինք որ՝ Գերջանի ու Լը-
զնկայի բոլորաթիւր եղած քիւրտերուն գործքը, աղէկ
կերթայ օսմանեան կառավարութեանը համար: Փա-
շան աղէկ պայմաններ գրեթէ է, ու քանի մը ցեղեր
խօսք տըլեր են հպատակելու:

«Եւ 70 գեղ տըլեր են անոր որ 50 ասորին ի
վեր քիւրտերուն ձեռքն էին: Երկրկայի Իզգէթ
պէյը որ փաշայութեան աստիճան առաւ, Գերջան
կերթայ աս վէճը վերջացնելու: Եւնեկն չենք
երկրայի որ չափաւորութեամբ վարեւելով՝ պիտի
յաջող աս գործքը: Զիմայ Գերջանի մէջ 4000
մարդիկ կան թէ հետեակ և թէ ձիաւոր զօրք, ու
երկու թնդանօթ: Ուրիշ հետեակ զօրքերու գունդ
մըն ալ կերթայ անոնց հետ մէկ ըլլալու որ Իզգէթ
փաշայի հետ մեկնեցան»:

ԲՆԱԿԱՆԱԿԱՆՔ

ՍԻՒՆԵԱՑ ԵՐԿՐԻՆ ՎՐԱՑԻ

ՍԻՒՆԻՔ ԿԱՄ ՍԻՍԿԱՆ

Մեր ազգին մէջ սովորաբար Սինիք կըսին, բայց
պարսիկները Սիսական կըկոչեն, որն որ աւելի ուղիղ է.
վասն զի աս նահանգը մեր հինգերորդ նահապետին
տղուն Սիսակին անունը առաւ, անոր համար պէտք էր
ուղիղ անունով Սիսական կոչել, ինչպէս խորենացին ալ
ն. 11. կըգրէ. «Հոս տեղս ծնաւ» (այսինքն՝ Գեղամ
նահապետը գեղաբնակեաց մէջ) իր անձնեայ ու սէգ
որդին Սիսակը... ու անոր ժառանգութիւն կուտայ
արեւելի կողմը (Կեղամայ) ծովէն ինչան մէկ դաշտ մը,
ուսկէց երասիս գետը... կանցնի... աս տեղը Սիսակ ընա-
կելով իր երկիրը շինութիւններով կըրցունէ, ու աշ-
խարհն ալ իր անունով Սինիք կըկոչէ, բայց պարսիկ-
ները աւելի յստակ Սիսական կըսեն»:

Երգ թէպէտ մենք Սինիք կըսենք հասարակօրէն

1) Բաղրաւած Հին Հայաստանի ստորագրութենէն:

բայց Սիսական անունն ալ շատ տեղ կըգործածուի. ինչ-
պէս Սիսականնոս (Օրպէլեանը կըսէ զԼ. Է. «Ու միայն
այս» ալ և Սիսական աշխարհին ու Երարատեան գա-
ւառին մէջ շատ եկեղեցիներ կային» ու ուրիշ տեղ ալ
կըսէ. «Սիսականու ամեն տունը խնդաց» մանուսնդ
թէ մի և նոյն խօսքին մէջ առաջ Սինիք կըկոչէ ու ետքը
Սիսական, Սրուանայ համար պատմելու ժամանակը զԼ.
Է. «Սինեաց աշխարհը գալով Երարատու բերդը կը-
պահէ, ու զայն ևս կուղէր արեւել, Սիսական գեղեցիկ
աշխարհը» 1)

Երկրպէս, Յովհաննէս կաթողիկոսն ալ մի և նոյն
պատմութեան մէջ Սրուանի համար՝ որն որ Երարատ
տի գաւառին մէջ իշխան դրեր էր, առաջ Սինիք անուն
կուտայ ըսելով «Կերթար (Սրուան) Սինեաց աշխարհ-
քը Սրատ իշխանին կիցար» ու քիչ մը ետքն ալ Սի-
սական կըսէ «Սրուան ելլալով Սիսական կողմերէն ծա-
ւալով»:

1) Երարատ գիւղաքաղաքը սիսական գաւառին մէջը
չէր ինչպէս որ սխալմամբ խորենացիին տպած աշխար-
հագրութեան մէջ գրված է, հապա Շողուկ գաւառին
մէջ: Ուստի աս տեղը Սիսականնոս (Օրպէլ Սիսական ը-
սելով՝ կիմանայ բոլոր Սինիքը:

բանաց քորնպիսկոպոսին քովը կերթար»։ Ուստի նոյն
Յովհաննէս կաթողիկոսը գաբուռն ըսված Սասակը
առաջ իշխան Սինեաց ու ետքը իշխան Սիսական կըկոչէ։ Ու-
ստի Սրատ իշխանը որուն Սրատ ն թագաւորը տըլաւ
«Կաթաւանը, Յովհաննէս կաթողիկոսը կանուանէ իշխան
Սիսական, բայց Սիսականնոս (Օրպէլ. զԼ. Է. կըսէ իշխան
Սինի։ Եւսոր հակառակ ուր տեղ Յովհաննէս կաթողի-
կոսը կըսէ Մեծ իշխան Սինեաց, նոյն Սրատը Սիսական-
նոս (Օրպէլ կըկոչէ, Մեծ իշխան Սիսական Սրատ։ Եւսա-
պոսան բան առաջ բերինք կարգացողներուն իմացը-
նելու համար, որ Սիսական անունը ուրիշ մէկ առանձին
գաւառ մը չի կարծեն Սինեաց նահանգին մէջ, ինչպէս
որ խորենացիին տպած աշխարհագրութեան մէջ գրված
է. որու վրայ ետքը պիտի գրենք։

Եւ նահանգը Կորին վարդապետ ուրիշ անունով
կըրիշատակէ այսինքն Սիսական աշխարհ ըսելով, որն որ
Սինեաց անունէն անանցաւ է։

Պոկոպոս ալ կըգրէ 1), թէ Յուստինիանոս կայսեր
ժամանակը. Կաւատ (պարսից թագաւորը) խրկեց հայաս-
տան՝ որ հոռոմոց իշխանութեան տակն էր ուրիշ զօրքեր

1) Գիրք պատերազմաց պարսից ն. 15:

ԵԳԻՊՏՈՍ

Նշխարանդրիս, 14 Յունվար :

Ննցած ամսու 7ին Մարտայէն հասաւ (Օրէնդալ շոգենաւը, 60 ճամբորդով, որոնց մէջն էր Ս. Մալքոյմ, Չինի գաշանց գիրք բերողը, որնոր Սիկոորիա Թագուհին ստորագրեց : Կըսէի Թէ աս պաշտօնատէրին հետ շատ կարեւոր հրամաններ կը խրկեն սըր Հէնրի փոզինճէրի որ Չինաստանի անգղիական նաւերուն կըհրամայէ :

— Կըզուրցըրի Թէ մօտէրս մայրաքաղաքին մէջ պանքօ մը պիտի հաստատուի 700 հազար Թալերով ուրուն մեծ մասը փաշան պիտի տայ :

— Կըլենք որ կառավարութիւնը 60 հազար խան-Թար վուշ (բէթէն) ծախեր է Ս. փառքէ ու Ս. Թօսիցցա վաճառականներուն, խանթարը 95 դու-ուուշ որ հաւաքով պիտի վճարուի : Կըսէի Թէ աս երկու վաճառականները կուզեն հիմայ ծախու առնել բոլոր ցորենը, որ 200 հարիւր հազար արտէպի կըհանի, նմանապէս 7 հազար խանթար ալ խէժ արաբիոյ (զամգ) . ցորենին արտէպը 40 դուուուշ, ու խէժին խանթարը 250 դուուուշ . ասոնց զինն ալ վերոյիշեալ կերպով պիտի վճարուի :

Գահիրէի նամակներէն իմացանք որ Շէրիֆ ուղան Մէսէտ Ֆէվզի փաշային քահանայ, յանկար-ծառնահ մեռեր է հոն . և Թէ անոր տղան ալ՝ նախկին Րիալա սէյը, ծանր հիւանդ է եղեր :

Քանի մը ատենէ ՚ի վեր ուրախ էինք որ ժանախտի դիպած մը պատահած չէր . բայց աս օրերս լսեցինք որ բժիշկ մը, ու դեղագործ մը աս հիւանդու Թէնէ մեռեր են, որոնք զունդ մը զննորներու կըծառայէին Տէլպայի մէջ : Լուողըութեան հոգաբարձուները առանց ժամանակ կորսնցունելու հարկաւոր եղած կարգադրութիւնները ըրին որ հիւանդութիւնը չի տարածի :

Հաւաքելով բեռսարմէնիայէն ու Սիւնեաց երկրէն որոնք Միւսաց սահմանակից են : 1)

Սիւնեաց անունին վրայ երկու դիտելիք կայ միտք առնելու արժանաւոր : Լուսինի Թէպետե շատ անգամ ախարհ կամ գաւառ բառին հետ կըգործածվի, բայց շատ տեղ ալ առանձին կըվարդի, ինչպէս կըսէ Ստեփաննոս (Օրպէլ “Ու եկան փախչողներն ալ Սահակ սիւնեաց տէրը, և Բաբգէն և Սասակ Սմբատին եղբարքը իրենց բուն հայրենիքը ՚ի Սիւնիս” :

Երկրորդ՝ կըվարէի փոխանակ բնակիչներուն, խորե-նացիին ըսածին պէս . Գ. 46. “Ու անոր սպարապետը կըմեռնի Կարա Սիւնի պատերազմին մէջ” այսինքն՝ որ սիւնեաց նահանգէն էր : Կոյնպէս Ստեփաննոս (Օրպէլ ալ կըսէ շատ տեղ “Տէր Երեսէ Սիւնի փիլիպէի որդին կըսպանէ իր սխալալութեանը համար” : Ու գլ. Լէ. “Ու շուտ մը զարնելով Սահակ սիւնի գեղեցիկ իշխանը սպաննեց” . նաև “Վալա մեծ Սասակ սիւնի իր մօրը եղբար-ներուն ու ուրիշ իշխաններու հետ մէկ տեղ ազատելով

1) Կըկարծըրի Թէ հոս տեղ Պրոկոպիոս Միւսներուն հետ կիմանայ Միւսաններն ալ որուն Սիւնիք սահմանա-կից էր :

ԱՄՈՐԵՍՏԱՆ

Պէրու. Թ, 20 Յունվար :

Ռէշիտ փաշան Երուսաղէմ գնաց իր նոր պաշ-տօնը վարելու :

Ննգրկայի եպիսկոպոսը Երուսաղէմի աս մօտ օրերս հոս եկաւ, և ըստ որում իր տանը շինութիւնը Երուսաղէմի մէջ բարձրագոյն հրամանով հոտ մնաց, այնպէս կըկարծենք Թէ աս է իր Պէրու. Թ գալուն պատճառը : Լս անձը շատ երկար խորհուրդներ Երաւ անգղիացոյ ընդհանուր հիւպատոսին ու Բրու-սիայի հիւպատոսին հետ . ու այսօր անգղիացոյ պատերազմական Հէքադ շոգենաւը մտաւ Լաֆիա երթալու :

ԱՐՏԱՆԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳՂԻՆ

Լոնտոնայի նամակներէն քաղաքական նոր լուր մը չառնիք . այլ անոնց տեղը կըգրեն Թէ սոսկալի փո-թորիկ մը ըլլալով՝ Լոնտոնայի մէջ, մանաւանդ ծով-եզերքներուն կողմը մեծ վնասներ տրւեր է : Կոր-ծանած տեղանքը շատ է, բայց բարեբաղդութեամբ քիչ մարդիկ մեռեր են փոթորիկէն, Թէ ցամաքի և Թէ ծովու վրայ : Լս փոթորիկին մանրամասն պատմութիւնը շատ սոսկալի է . որովհետեւ ինչպէս կըպատմեն, լուման 24 ժամ տեւեր է :

Լոնտոնայի փողոյները ծխնելուղի (օճախ) ու կըմխտրի (քիւրէմիթ) կտորանքներով ծածկած են : Երաւերը կործանեցան . ու Բէնսինկոօն Կարտրինի մէջ մէկ վաղեմի կնձնի ծառ մը (քարա աղաճ) ուրու տակը ճեմելիք էր, արմատէն խրլեցաւ : Եւ տուններ վնաս կրեցին . ամեն տեղ աւերակի մը տեսարան եղած էր : Ու ինչոսորի մէջ ալ հոյժը շատ ծառեր արմատէն հանեց :

Լիւլըբուրի մէջ ծանրաչափ գործիքը այնչափ վար իջաւ, որ քառասուն տարի է ՚ի վեր եղած չէր : փորթամութ, արեւմտեան հոյժը ու արեւմտեան հա-րաւային, մեծ վնասներ պատճառեց : Սփիթէտի ու Սթիւէրպանքի մէջ երկաթ նետած նաւերուն մեծ

Բուղայի (ոստիկան) գերութենէ ու դառն կապանքէն իր հայրենիքը սխալան աշխարհը կըմտնէ : Ու գլ. Ի. “Հրաման կուտայ Միւսի սիւնեաց տէր, որ ամեն սիւ-նիք փախչին”, այսինքն սիւնեաց բնակիչները : Մսկէց կիմացի Թէ օտարախորթ է սիւնեցի կոչել բնակիչները, բայց Ստեփաննոս (Օրպէլ գլ. Իէ. կըգործածէ զան : “Տե-ղեգ չի շարժիս առանց Սիւնի Սթիւէրպանի” :

Սիւնեաց նահանգին դիւքը արարատայ արեւելի կող-մը կիյնայ, երասիս ուսարձախ գետերուն մէջ տեղը : Եւ տգիտարին (սարի) տեղեր ունի, ինչպէս իր գաւառնե-րուն ստորագրութեանը մէջ պիտի իմացի, ու ինչպէս հովհաննէս կաթողիկոս ալ կըսէ. “Ու սխալան աղգե-րուն ու տիրանցը մէջ շատ խռովութիւն կըլլար Բուղայ ոստիկանէն, բայց անոնք ձորերուն (տերէ) խորտեղան-քը, ու ամուր քարանձաւները (մաղարայ) ամրանալով թշնամեաց դէմ շատ ասպատակութիւն կընէին” : Լոնտոն համար օրպէսեանց տպած պատմութեան մէջ, գլ. Է. կը-կոչուի. Միւսը և Միւսի աշխարհն սիւնեաց : 1)

1) Բայց խորենացիին աշխարհագրութեան ան խօսքը որ կըսէ Թէ կըգտնուին Միւս տեղիք ի սիւնիս երկու ձե-ռագրի մէջ չի գտնուիր բայց միայն տպածին, ու

մասը ժուռ կուգային ալիքներուն վրայ որ հոյժը կա-տաղութեամբ կըմղէր : Եւ տ նաւեր՝ որ փոթորիկէն առաջ դուրս ելած էին, ստիպեցան Վամպրիճի մէջ ապահովել : Տէվօնփօր ալ փոթորիկը շատ սոսկալի էր . կըսէի Թէ հինգ վեց նաւ ծովեզերքը զարնուեցան : Լմենեին տեսնուած չունէր ալիքնե-րուն այսքան բարձրութիւն ելալը :

Պրիկթօ՝ ի մէջ ինչպէս ուրիշ տեղեր ալ փոթո-րիկէն առաջ ձուռն եկաւ . շատ վաճառականի նաւեր կորսուեցան հոս :

Լոյտ՝ ս Ե իփինկ օրագիրը կըծանուցանէ Թէ քիչ կամ շատ դիպածներ եղան Սամսիադ, Տէալ, Կարմուտ, Ե Էէրնէս Սարկաթ և քաղքէները : Եւ տ նաւեր վնաս կրեցին, որոնց քանի մը հատը ընկղմեցան, բայց գրեթէ բոլոր նաւաստիները ազատեցան :

Ննգրկական օրագիրները կըծանուցանեն Թէ Սաք Կօքըրն անունով մէկը՝ որ խելագարութեան նշաններ ալ տրւած է, ատրճանակով զարկաւ սըր Ս. Գիլպաշտօնատարին խորհրդեան գալիւր (սըռ-քեաթիպի) Ս. Տրիւմֆտ անունով, որ մեռաւ ամ-սուս 13 ին :

ՍԱՐԱՈՆԻՆ

Ի Իրիս 6 Յունվար :

Երկրէն ճամբաները շինուելն ՚ի վեր, աս քա-ղաքը շատ ծաղկեցաւ : Լուսնուց Ի Իրիսայի բնա-կիչներուն Թիւր էր 43,000 հոգի . բայց հիմայ 55,000, այսինքն չորրորդ մասի մը չափ էլվի, ու սկսած են իրեք նոր փողոց շինել : Լս քաղքի տօնա-վաճառին (բանայիլին) գործքերը՝ որ հինգ տարի առաջ 40 միլիոն Թալէուր կըհասնէին տարին, հի-մայ 70 միլիոն Թալէուր կանցնին :

ԴԱՎԱՐԵԾ

Մեր յարկի Թղթակիցը Գալթէֆու, հետեւեալ լուրը կուտայ մեզի իր նամակով՝ 26 դեկտեմբեր 1842 ին գրված :

Իր բերքերը էին, խորենացիին ըսածին նայելով, Սուրա (մէրսին աղաճը), Կերերի, ու Կուռն :

Սիւնեաց քանի մը կողմի բնակիչներուն բարքը, Գա-գանափտ փայրենաղոն ճիւղաբարոյ կըլուէ Կորինը, բայց ուրիշ պատմութիւններ կըհաստատեն Թէ զարաւոր, կո-րովի, պատերազմի ու ուսման մէջ ճարտար ու յաջող են անոնք . նմանապէս չարութեան գործքերով ալ երեւելի եղան ու վրէժ առնելու համար իրենց ստեղծներէն, զոր-հօրերէն բաներ ըրին, որոնք էին Սասակ մարզպան Սա-րազմաղան Գալթիոն . ու կնիկներէն ալ՝ փառանձեմ, ու ան կինը՝ որ ինքը սրով սպաննեց Ստեփաննոս ի՞նչ սիւնե-աց եպիսկոպոսը :

Սիւնեաց իշխանութիւնը ու նահապետութիւնը սկիզ-բէն ՚ի վեր միշտ երեւելի եղաւ, ու շատ պատուով մեծար-ւեցաւ, “Լս նահապետութիւնը (կըսէ Ստեփ, (Օրպէլ գլ. Գ.) նախկին Սիսակէն սկսելով որդոց որդի կըկառա-

Թովմաս կիլիկիցիին մէջ, որ հայաստանը ստորագրե-լու ատենը գրեթէ բառ առ բառ խորենացիին կօրինակէ-բայց անյարմար շարագրութեանը կարգէն անանկ կի-մացի որ ետքինները աս բանը էվլեյուցեր են խորենա-ցիին մէջ :

«Իրական վաճառականներուն արտոնութիւնը առ- նըլէլէն ՚ի վեր , ինչպէս որ սեպտեմբեր ամսու 12 ին ծանուցիւր ենք , իրեք ամսու վն մէջ 20 հոգի պարսից վաճառականներէն սնանկանալով՝ դացին ղենպետին տունը պահէցան : Ասանկաւ շահին եղբայրը Ռահման Միրզայ իշխանը , երբ որ խոյէն ետ կը դառնար իր բնակարանը՝ անցած ամսու 21 ին՝ սնանկացած վաճառականներուն խորհուրդութիւնը տեսնելով շատ ջանաց որ հարբով մը հանէ ղանոնք ղենպետին տունէն . վասն զի կը վախճար որ բռնու- թեամբ հանելու ժամանակը գիտնականները ամբաս- տանութիւն կընեն կառավարութեանը դէմ : Ըստ ամենայնիւ Ռահման Միրզան տեսնալով ղենպետին յամառութիւնը՝ ներկայ ամսու 10 ին հրամայեց ի- լիկան դէմ իր Գառաշապաշին (Գառաշապաշ) Գ- բաս խանին , որ առաւօտուն կանուխ արեւը չի ծա- գած ղենպետը ու ամմէնքը քնացած ատենը , խա- բէութեամբ սնանկացած վաճառականներէն իրեք երեւելի անձինք ղուրս հանէ բռնութեամբ : Ըբաս խանն ալ , որ միշտ ղանաղան ղիպաճներու մէջ իր քաջութիւնը ցուցնաց է , ժամը երկուքին՝ բոտ արեւելից , իր հետը հարուր ընտիր Գառաշ (Գա- ւազ) առնելով , յանկարծ ղենպետին տունը մըտ- նալով բռնեց բանտը ղրեւ է ղանոնք պարանոցին ալ շղթայ ղնելով : Այլ ժամէն ետքը աս լուրը բոլոր քաղաքը տարածվելով ամմէն մարդ վախցաւ , ու օտարականներն ալ չի համարձակեցան տներէն դուրս ելլալու մինչև կէս օր :

«Իշխանը ժողովրդոց երկիւղը լսելով հրաման տը- վաւ նոյն Ըբաս խանին որ տանի ան իրեք հոգին քաղքին ամմէն մէկ կարավանատարային մէջ յիսու- նական փայտ ղարնէ ոտքերնուն : Սիւրբապէս , իշ- խանին աս համարձակ վարմունքը մեծ վախ տըվաւ ամմէնուն , ու բոլոր քաղաքն ալ հանգարտեցաւ :

ՅՈՒՆԱՍՏԵԼՆ

Ըթէնք , 28 Յունվար :

Ըս երկրի քաղաքական գործերը գեւ մի և նոյն

վիճակի մէջ են : Վանի մը օր է որ իրեք պաշտպան տէրութեանց ղեսպանները կը թղթակցին մէկմէկու հետ : Վաղղիայի ու Վալիէալի ղեսպանները՝ միւսներէն աւելի , քանի մը հարկաւոր վէճերու մէջ ղտնընդցան մօտեւս : Ըբաշինը աղէկ հասկըցաւ որ փուճ տեղը այնքան ղրամ հաներ է իր քսակէն . իսկ երկրորդը կը վախճար որ չըլլայ թէ Վալիէալի թագաւորին հոնաստանի փոխ տըւած ստակին վնաս մը ըլլայ :

Դեկտեմբեր 28 ին՝ առաջին յայտարարութիւնը արտաքին գործոց պաշտօնատարը խրկեց Ընգղիոյ Վաղղիոյ ու Ռուսիոյ ղեսպաններուն , որով յունաց կառավարութիւնը իրեք պաշտպան տէրութիւննէ- ղէն երաշխաւորութիւն կուղէ տասը միլիոն ֆլանք փոխ առնելու համար , խօսք տալով թէ աս գու- մարը իր պարտքերը կը գոցէ :

Յունվար 8 ին աւնոր յայտարարութիւն մը տըր- ւեցաւ յիշեալ ղեսպաններուն , թէ յունաց կառա- վարութիւնը՝ մարտի 1 ին պիտի չի կրնայ հատու- ցանել իր պարտքերուն շահը . և թէ կը ղնդրէ որ աս բանիս համար ինչ որ հարկաւոր է նէ իրենք հոգան :

Երրորդ յայտարարութիւն մըն ալ ղեսպաններուն խրկընցաւ , յունվար 19 . ծանուցանելով անոնց կառավարութեանը աս տարվան բոլոր ծախքը , կամ թէ՛ ալ աւելի յայտնի ըսելով , հոնաստանի եկա- մուտներուն թշուառ վիճակը . . . :

ՉԱՆԱՆԱՆ ԼՈՒՐԵՐ

Դ. Միւսնիա , 5 Վետրվար :

Յերաւի գովութեան արժանի են այնպիսի աղմու- ական երեւելի անձինք , որոնք ուրիշ քաղքներէն իղմիր գալով , իսկոյն մեր ղարատուններուն այցե- լութիւն ընելու յօժարամիտ կը բարեհաճին . որով նորահասակ աշակերտներուն ու բոլոր վարժապե- տաց ուսումնասիրական յորդոր ու քաջալերութիւն մը կը տըրուի : Ուստի կը պարտաւորինք մեր մտերիմ շնորհակալութիւնը յայտնել քաջատոհմիկ Միսաք

եան յարգի Վարդերես աղային , որ անցած շա- բաթ Կոստանդնուպօլիսէն գալով , հաղիւ թէ 5-6 օր մնաց իղմիր , ու կը կրնի ղարձաւ յիշեալ մայրա- քաղաքը . այսու ամենայնիւ ինքնայօժար պատիւ ը- րաւ մեզի , այցելութիւն ընելով թէ՛ սուրբ Սե- րապետ և թէ՛ Վարդեսեան ղարատունը , ու ուսումնա- սիրական խօսքերով քաջալերութիւն տըվաւ թէ աշակերտներուն և թէ վարժապետաց որպէս ղի շա- րունակէն միշտ գիտութեանց ու բարեկրթութեան վրայօք ունեցած իրենց ղովելի եռանդնին :

Փարիզու օրագիրները կը ծանուցանեն թէ Վ . Վսեմութիւն Ռեշիտ փաշան , յունվար 16 ին մեկ- ներ է ան մայրաքաղաքէն , Կոստանդնուպօլիս եր- թալու Վէնայի ճամբայով :

— Վ . Սե . Վալադ Էֆէնտին՝ Վէսլինի ղես- պանը , անցած ամսու 28 ին հասու հոս , ու հետե- հաւ օրը մեկնեցաւ ասկէց իմբեստ երթալու :

— Կիրակի իրիկուն պարտէզներուն կողմը հրէայ մը յոյնի մը հետ կուտելով , որոնց երկուքն ալ ար- բած են եղեր , առջինը ղանակով ղարկեր է իր հա- կառակորդը , որ թէպէտ չէ մեռեր բայց առող- ջութեան յոյս չիկայ կըսեն :

Կոստանդնուպօլիսէն գըլած նամակի մը մէջ կը կարդանք թէ անանի Հիւսէյն փաշան Վիտինու , միւսեր է , ու շատ հարստութիւն ձգեր է :

Վուռնալ տէ Տէպա ըււած գաղղիական օրագրին մէջ՝ յունվարի 1-6 հետագայ լուրերը կը կարդանք :

«Վանի օրէ որ փոթորիկ մը կը թագաւորէ Ով- կիանոսի վրայ ու շատ վնասներ կուտայ Վաղղիայի արեւմտեան ամմէն կողմին :

«Վալէէն կը գրեն , 2 յունվար :

«Երեկ կէս օրէն ետե մեծ փոթորիկ մը ըլլալով հոս , ղարհուրելի որոտում մը լսեցաւ ու կայճակ իջաւ ջրանցքը : Վերունի նաւատի մը՝ որ թում- բի մը վրայ կեցած էր ղլորեցաւ ինկաւ կայճակին սաստկութենէն , բայց վնաս մը չի կրեց :

վարեն տէրութիւնը երկար ժամանակ մեծ մեծ քաջու- թիւններ ցուցունելով հայոց թագաւորներուն պատե- րաղմներուն մէջ , ու շատ և մեծ մեծ պարգևներով ու իշխանութիւնով ալ պատուեցան հայոց ու պարսից թա- գաւորներէն մինչև յոյներէն ալ . ու այնքան երեւելի ե- ղան որ հրաման ունէին արծաթի (աթու) շինել , մար- գարեայ վարսակալ (մաղերու կապ) ունենալ ու մա- տանի վարաղագիր (եապան տօմուզի ղրօշմաճ վրան) , կարմիր կօշիկ ու ոսկի գաւաղան , վրան տոհմին անունը կամ պատիւը դրած» : 1)

Բայց սիւնեաց սեպհական իշխանութեան բուն աթո- ուր Վաղարշակ հաստատեց . «Վսոր սերունդէն (այսինքն Սիսակայ , կըսէ խորենացին Թ . 11.) Վաղարշակ որ հայոց առջի պարթև թագաւորն է , երեւելի մարդիկ գտնալով երկրին տէր կանուանէ , որն որ սիսական աղգն է : Ու չէ թէ միայն հասարակ իշխան դրաւ , այլ և կողմնակալ :

1) Կիրենայ թէ աս ամմէն պատիւներէն որն որ Ստե- փանոս (Ռոպէլը կը թուէ , գոնէ մէկ քանին սիւնեաց իշ- խանները առին Վաղարշակէն ետքը , վասն զի նաւ յու- նաց թագաւորներէն ալ պատուեցան կըսէ , որն որ յունաց կայսերներուն համար պէտք է իմանալ , մեծ Կոստան- դիանոսէ սկսած , որ Վաղարշակէն շատ տարի ետք է :

արեւելեան կողմանը . . . » :

Ըս կողմնակալութեան պաշտօնը սիւնեաց իշխանե- րուն , Տրդատ թագաւորին տտենն ալ հաստատեցաւ , երբ որ նորէն կարգի դրաւ իր թագաւորութիւնը քը- սանըմէկ իշխաններով արեւելեան կողմի պահպանու- թեանը համար . անցուց նաւ ու թ իշխաններուն թի- ւը՝ որոնք Տրդատայ չորս հարիւր իշխաններուն մէջ ղահագըլու կանանէին , ինչպէս կըսէ Ստեփանոս (Ռոպէլ գլ . Է , Վեռնէն առնելով : 1)

Բայց աս պատիւը սիւնեաց իշխանութեան , շատ նուազեցաւ չէ դարուն վերջերը , Ըրշակ ու Վապ թա- գաւորներուն ժամանակը . ու սիւնեաց նահանգը քսա- նը հինգ տարի բոլորովին ապականեալ աւերակ մնաց . ինչու որ Շապուհ պարսից արքայն՝ Մշդու իշխանը սիւնեաց դրաւ չորեքտասաներորդ կարգը հայոց իշ- խաններուն : Ըսոր վրայ խոթողելով Մշդու՝ հնար- քով մը թալեց Տիւրքն քաղաքը , ու սիւնեցի բնակիչ- ներուն հրաման տըվաւ որ փախչին , տները ու համա- բանոցները այրեն . վերջապէս ինքն ալ փախաւ մեծն

1) Բայց պէտքը չէ աս կարգը Ըբաթանգեղոսին մէջ փնտըւել . ուր տեղ սիւնեաց իշխանը մետասաներորդ կը ղապէ , ուրիշ յիշատակած իշխաններուն մէջ :

Իւրեղոսի քով , որ անանեց ղանի Պարթաւ պարթի . Շապուհ գաղանաբար սիւնեաց վրայ յարձակելով , Տիւրքն քաղքի աւարառութեան վրէժը պահանջելու , եկեղեցիներէն ուրիշ բան մը չի գտնալով ամմէնն ալ քանդեց : 1)

Ընկէց ետե այնչափ ատելութիւն ունեցան պարսիկ- ները սիւնեաց դէմ , որ սանդ (հալան) մը դրած իրենց արքունի պալատին մէջ՝ հնոցի մոխիրով լեցուն , կը կո- փէին մոխիրը ու կըսէին . «Վիւնեաց տերանց նախա- գահութիւնը ու տէրութիւնը աս մոխիրին պէս ըլլայ նաւ անոնց խորհրդոց և կենաց որպիսութիւնը» : Բայց աս անարգութիւնը վերցընել տըվաւ Բաբիկ իշխան Մշ- դուկայ որդին իր քաջութեանը համար , որով մենամար- տութեան մէջ սպաննեց հոնաց գլխաւորը , ու առաւ Շապուհ արքայէն՝ սիւնեաց նահանգին տէրութիւնը ու նախագահութիւնը , համապատիւ ըլլալու քաղա- տուններուն ու մամիկոնեանց հետ , Կոստով հայոց արքային երկրորդ տարւան մէջ , ու 138 տարի հայոց թուականէն առաջ :

1) Շապուհին աս թշնամութիւնը սիւնեաց հետ , համառօտիւ կիմացընէ խորենացին Գ . 28 :

պիտի շարունակէ :

«Մեն-1» քաղաքէն կը գրեն 3 յունվար :
«Հինգ օր է որ շարունակ փոթորիկ կը լայ հոս ,
կարկուտը ու կայծակը մէկըմէկ կը յաջորդեն :
«Մայր եկեղեցիին վրայ ալ կայծակ իջաւ , բայց
շատ չի վնասեց . բայց ուրիշ երեւելի եկեղեցիի մը
փառաւոր զանգակատունը վերէն 'ի վար ճղքելով՝
բոլորովին կործանեց :
«Նմանապէս շատ մարդիքներ զարկաւ կայծակը
ու հովին սաստիկութենէն ալ խել մը տներ վրան :
Վիլլանտոն ըսած տեղը երկու տուն էրեց շանթը
ու Պալլուռա՝ բաղնիքի տներ մոխիր դարձուց :

Լստիճանը բարեխառնութեան Օմիւռնիոյ , դիտեալ
'ի միջօրէի և եղեալ ըստ բաժանման Սոմուրի :

Սոմուրի :		Նարեկ :	
Ուրբաթ	29 Յունվար + 10½	աստիճան	21 աս .
Շաբաթ	30 " + 11½	"	21½ "
Կիրակի	31 " + 12½	"	19¾ "
Երկուշաբթի	1 Փետրվար + 11½	"	00 "
Երեքշաբթի	2 " + 11¾	"	00 "
Չորեքշաբթի	3 " + 11¾	"	00 "
Հինգշաբթի	4 " + 11½	"	20¼ "

ԻՌԵՆԻՍԻԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ ԳՆՂՂԻՆ

Մարտիկա , 20 Յունվար :

Բամպակ : Միշտ մի և նոյն թուրքական վիճակի
մէջ է ու գինները օր է օր իջնալու վրայ են , մանա-
ւանդ խղմիրու բամպակներուն անունը տըւող չի կայ .
Հիմակուհիմակ ամսին տեսակ բամպակներէն 23,567
պալեա կայ քաղաքիս մէջը . անցած տարի աս ա-
տենս , 34,545 պալեա կարո ու 1841 ին ևս աս ամսը
վան մէջը միայն 10,692 պալեա կար :

Ղէհրի : Խիստ քաջ ապրանք կայ , ու կուզի .
Թէպէտև այս շաբաթ նոր վաճառմունք չեղաւ ,
բայց ճէհրի ունեցողները 2½-2½ ֆունքէն պակաս
կէս քիլոկրամը չեն ուզեր տալու :

Գործատուների վերաբերեալ ձէթ : Վիւիւմը կուզ-
ւի . աս օրվան արժողութիւնը պատրաստ ապրան-
քին համար 116 ¼-117 ֆունք է էթթօլիթրան (75
օխան) :

Սուսամ : Խիստ թուլ է ու շատ եկաւ . պատ-
րաստ ապրանքը՝ 49 ֆունք հարուր քիլոկրամը
դժուարավաճառ է :

Կտաւատ : Նմանապէս անշարժութեան մէջ է .
մէկ մաս Ռուսիայի ապրանք 26 ½ ֆունքի ծախե-
ցաւ հարուր քիլոկրամը , հարուրին ½ վար իջեցու-
նելով :

Թրեւտ , 20 Յունվար :

Գլխաւոր ապրանքայ գինները :	
Լֆիօն	Փունթը 5 ½-5 ¾ ֆիօրին
Լսպուր	խանթարը 60-63 "
Բամպակ Սոպուճա	" 23-24 "
Փասն Սոպուճա	" 22-23 "
Քրքաղաճ	" 22-23 ½ "
Խառապա	" 26-26 ½ "
Պայքնտըր	" 22-23 "

Խըպըզ	" 23-24 "
Փալամուտ առաջինը	" 11-12 ½ "
ևս երկրորդը	" 9-10 "
ևս խարամանինը	" 6 ¾-7 "
Բուրդ չի բանաճը	" 20-23 "
ևս լուսացածը	" 35-40 "
Թիֆթիք Լնկիւրի	" 90-110 "
Սև բէլթօն	" 56-58 "
Կալմիւրը	" 56-58 "
Մետաքս Պրուսայի ֆունթը	" 7-9 "
Պարեամպօլուինը	" 5-5 ½ "
Կիւլեաղը	" 94-95 "
Կարմիր չամիչ խարապուրունի խանթարը	" 6 ½-6 ¾ "
Բնտրածը (էլէմէ)	" 10 "
Իւմիւրինը	" 6-6 ¼ "
Բէլզաքէրէինը	" 6 ¾ "
Ուրլինը	" 6-6 ¼ "
Կուսուրը	" 11½-13½ "
Սև տակաուի մէջ	" 4-4 ½ "
Թափածը	" 3-3 ½ "
Ղէհրի նորը	" 70-80 "
Հինը	" 40-45 "
Խակիլիկ նորը	" 40-55 "
Վիտոր խառն	" 24-25 "
Սևը	" 30-32 "
Կանանչը	" 22-25 "
Ղէհրի	" 25-27 "
Մեղրամոմ	" 104-105 "
Պղնձ հին	" 48-48½ "
Սալեպ	" 50-55 "
Սապոն Կիւրիտինը	" 18-21½ "
Քիթրէ	" 125-135 "
Տորոն Պալմըրու	" 28-29 "
Քայաճըխինը	" 23-23½ "
Եզան մորթ	" 25-26 "
Սակամինի ֆունթը	" 10-10½ "
Կտաւատ ըսթարօն	" 6-6½ "
Սուսամ	" 8½-9 "

ՏԱՃԱՆԱՏԱՆ

Օմիւռնիա , 5 Փետրվար :

Լուստուրնիս գրեթէ անշարժութեան մէջ է ,
ու խիստ քիչ գործառնութիւններ կը լլան , Եւրո-
պայէն եկած անյաջող լուրերուն պատճառով :

Բամպակ : Խիստ թուլ է ու գինները օրէ օր իջ-
նալու վրայ են :

Սոպուճա	205-210
Խառապա	190-210
Քրքաղաճ	195-200
Պայքնտըր	180

Բուրդ : Ընշարժութեան մէջ է . չի բանաճ
ապրանքը ըստ տեսակին 160-185 զուռուշ է խան-
թարը . բանաճ առաջին տեսակը՝ 275-280 . երկ-
րորդ տեսակը՝ 170-175 . Թխպագոյնը՝ 160-165
զուռուշ :

Ղէհրի : Կուզի ու քիչ ապրանք կայ . աս օր-
վան արժողութիւնը ըստ տեսակին 17 ½-22 զուռուշ
է օխան :

Լֆիօն : Թուլ է , ու 85 զուռուշ չէքին դըժ-
ւարավաճառ է պատրաստ դրամով :

Ձէթ : Նմանապէս անշարժութեան մէջ է . Մի-
տիլիի ու Լյորէմիտի ապրանքը , նաւուն մէջը ա-
ւանդելու պայմանով , բոլոր ծախքը վաճառողին
վրայ , 193-202 զուռուշ է խանթարը :

Փալամուտ : Միշտ կուզի , 100-125 զուռուշ
խանթարը ըստ տեսակին զիւրավաճառ է :

Եզան մորթ : Վիւիւ կայ . 6-6 ¼ զուռուշ օխան
զիւրավաճառ է :

ՓՈՒՆԵՆԿՈՒԹԻՒՆԻՐ

Կոստանդնուպօլիս , 27 Յունվար :

Լֆտուա	119-118½-118¾
Մարտիկա	184-184¾
Վէննա	481-482
Լիւօրնօ	157¾

Օմիւռնիա , 29 Յունվար :

Լֆտուա	119½
Մարտիկա	185-185½
Թրեւտ	478-481
Ղէնօվա	
Վէննա	482
Լիւօրնօ	157
Օտեւա	19
Կոստանդնուպօլիս	

Ստանդերուն շուկայի գինը :

	զուռուշ
Լիւրա սթերլինա	125
Նաթուլ	101
Տուպլօն Սպանիոյ	412
Տերէքլի ըրեալ	27
" Չիլէքլի	26
" Շիլի	25½
Հինգ ֆունքնոց	24½
Հինգ տրախմի	23
Քարպօվանց	20½
Նոր քսաննոց	23½
Մահմուտիյէ	90
Հին քսաննոց	27
Տաննրկուքնոց	23
Րուպիէ	10½
Եալըզ	59½
Մաճաու	58½
Ստամպօլ	32½
Րուշուտ	33½
Մըսըր	30
Իքիլիք	12½
Իւլիլիք	16½
Պարպուտ	4½
Ցըվանցիք	4½

Պէշլիկ հարուրին 8 գլխով :

ՎՐԻՊԼԿ

Լնցած շաբթեւան օրագրին մէջ սխալմամբ դըր-
ւած է , աղանիին վիզը եղած Թղթին մէջի խօսքը՝
Թէ շուտով ծախէ լեւ . փոխանակ ըսելու շուտով
դաշնադրէ լեւ :